Ինչպես հայտնի յէ, հիշած ըրջանում հակահեղափոխական մենշևկները, դաշնակցականները և մուսավաթականները անջատելով Անդրկովկասը հեղափոխական Ռուսաստանից, Գերմանատաճկական և Անդլո-ֆրանսիական իմպերիալիզմի միջամտությամբ, կարճ ժամանակի ընթացքում վերածեցին այն աղդամիջյան կոտորածների մի լաբերինթոսի։ Ազգամիջյան հարաբերությունները և կրքերը ծայր աստիճան սրվեցին. գործը հասակ չուրջկալներին։ Բազվում, Թիֆլիսում իր տնտեսական գիրքերը ամրապնդած հայ բուրժուազիայի աստղը սկսեց թեքվել։ Այդ կերպ առ լինել չեր կարող։ Հայ կապիտալիստների իմպերիալիստական տեսչերը, հարեան պետություններից վիճելի տերրիտորիաները զրավելու ձգտումը, «ծովից ծով» Հայաստան ստեղծելու ավանդուրիստական քաղաքականությունը, շոշափում ելին վրացի և թուրք կապիտալիստների ու կալվածատերերի շահերը և ընդհակառակը։ Ահա թե ինչու ծայր առան դաշնակ-մենշևիյան դաշնակ-մուսավաթական պատերազմները, բնաջնջվեցին ու ամայացան ամբողջ ըրջաններ։ Դրությունը չվացալ։ Պրոլետարական հեղափոխության վերահաս վտանգը, ինչպես Ռուսաստանում, փորձը ցույց եր տվել, վերջնական մահ եր բերելու կապիտալիստների ու նրա իշխանության։ Պետք ե շտապել միքելու նրան։ Այստեղից ել Դաշնակցությունը չհրաժարվելով իր իմպերիալիս-

տական քաղաքականությունից, ոտար յերկրներում հայ կապիտալի համար ստեղծված աննպաստ պայմանների պատճառով, նրա կործանումը կանխելու նպատակով, իր ամբողջ սրությամբ առաջ քաշեց ազգային կապիտալի ներմուծման լողունգը, վորտեղ դաշնակցության հովանու տակ պետք եր աճեր ու զարգանար աղջային բուրժուազիան և կապիտալը, ամբազնդելով դաշնակների պետականության տնտեսական և քաղաքական հիմքերը։ Փամանակակից գաշնակցական մամուլն ևս այս հարցին նվիրել ե մեծ ուշաղրություն (Ա. Վարյանի և այլոց հոդվածները), բայց ամենից ուշաղրալ ե «Ժողովուրդ» թերթի 1920 թվի փետրվարի 4-ի «Հայ-բուրժուազիան և Հայաստանը» խմբագրականը, վորտեղ պարզ կերպով ասված ե։ — «Անկախ (!) Վրաստանում և անկախ (!) Աղրբեջանում հայ-բուրժուազիան պիտի անխուսափելիունը յենթարկվի տնտեսական և քաղաքական ճնշման... բազվում «Աղրբեջանի» ասելով կառավարությունը հավաքում ե «կամավոր» տուրքեր աեղական բուրժուազիայից, մոտ 200 միլիոն ռուբլի այս գումարի մի խոչոր մասը պիտի տա հայ բուրժուազիան»։

«Թիֆլիսում արդեն խօսում են Մելիք-Աղարյանի, Արամյանի և այլնի տների մասին և այլն։ Նման ճնշումների ազգեցության տակ, հայ բուրժուազիան իր աչքերը հառեց մի պահ կամավորական բանակը, վորը ամեն տեսակ գյուրություններ եր տալիս իր մոտ հայ կապիտալիստներին։ Բայց բայլչեկների հաջողություններն անհնար են դարձնում Անդրկովկասի հայ բուրժուազիայի անդամներ թուրքների գործներությունը Աղմելին՝ այստեղի հայ բուրժուազիան պիտի ապելի ապահով վայրեր։ Այսպիսով պիտի ստիպված և հեռանալ պելի ապահով վայրեր։ Այսպիսով պեղծվում ե բացառիկ նպաստավոր պայմաններ, վոր հայ կապիտալիստների գործներությունը փոխադրվի մեր յերկիրը։ Յելի հայ բուրժուազիան գիտակցելով իր շահը և իր պարտքը՝ պիտի որ առաջ սկսի այս անել։ Ճիշտ ե Հայաստանում դեռ չկան ներքին նպաստավոր քաղաքական և սոցիալական պայմաններ կապիտալի պարզացման համար, բայց նրանք կստեղծվեն մոտ ապագայում։ Կարդացման համար, բայց նրանք կստեղծվեն մոտ ապագայում։ Յեկի հայ բուրժուազիայի ակտիվ գործունեյալությունը — Հայաստանում վերջին քաղաքական պայմանների բարեփոխության ուժեղ գործուներից մեկը կլինի։ Նման պայմաններում հայ կապիտալի պարտքը Հայաստան կենսական անհրաժեշտություն է, թի հայ մուտքը Հայաստան պատերազմության համար։ Առաջ սկսելով ապագայի և թի մեր մասուկ համբավետուրյան համար։ Յեկի հայ բուրժուազիան պետք ե կատարի իր պարտքը։ Զմուռնակ հիշել, վոր գեռևս 1919 թ. սկսեմբերին թիֆլիսում հրա-

վերդած հոյ արդյունաբերողների և բանկերի ներկայացուցիչների ժողովը, արտահայտել եր իր ցանկությունը կապիտալը Հայաստանի փոխադրելու մասին, յեթե Հայաստանում ստեղծվեն կապիտալի զարգացման (հավելյալ արդյունիքի) նպաստավոր պայմաններ, գույքի և անձի այսահոգության և վերջապես վճռվեր մի ժանրակակիռ հարց—Հայաստանը յելք ունենար դեպի ծով—(արդյունաբերողները և բանկիրները ցանկալի ելին համարել միջերկ կրյան ծովը) :

Ահա կաղիտավալի համար նպաստավոր այս պայմանները ստեղծելու մասին ե, վոր գաշնակցական կառավարության անունից հավաստիացնում ե հայ կազետների որդանը, Հուսադրելով, վոր հայ բուրժուազիայի ակտիվ գործունեյությունը Հայաստանում միաժամանակ կապիտալի զարգացման նպաստավոր պայմաններ ստեղծենու ուժեղ գործոններից մեկը կլինի:

Այս տեսակետից ազգային կապէտալի դարձացման համար մեծ խոչընդուռ եր հանդիսանում Ռուսահայտանի վոքը տեր՝ բիտորիայի վրա բավականաչափ մեծ տարածություն դրավոր թուրք բնակչությունը, վորը մանավանդ չկարողանալով այլև առնել դաշնակցության լուծը հաճախակի զենքի յեր դիմում և դաշնակցության բաղմանը վարտաքին և ներքին—ճակատներին ամելանում եր մի նոր, վոչ պահաս վտանգավոր ճակատ ևս :

Ահա, թե ինչու գաշնակցությունը հենց վոր մի փոքր ապահով զով զգաց իրեն արտաքին ճակատում, խեղդեց մալիսյան հեղաշիուական շարժումները յերկրի ներսում, անմիջապես ձեռնարկեց վախուց նախագծած «Խաչակրաց արշավանքին», ինչպես քաղաքական ավանտյուրիստներին հատուկ վոճով—անվանում և այդ գաշնակցական թերթերից մեկը։ Դաշնակների այսորբնակ քաղաքականության վրա վճռական ազդեցություն ունեցավ հեղաշիուական դեղքերի հասունացումը Հայաստանում, Ռուսաստանի և Ադրբեյջանի խորհրդայնացումը, վորի հետևանքով հայ բուրժուազիան փակվեց աղքատիկ Յերևանյան նահանգում և սկսեց իր արյունալի ավանտյուրաները, թուրք աղղաքանակության ֆիզիքական բնաշնչումը։ Ի դեպ այդ անհրաժեշտ եր գաշնակցությանը մի կողմից զրավելու թուրք աղղաքանակության հողերը, ունեց վաճառքը ամելի ամրապնդելու իր տնտեսական բազան, մյուս կողմից նախապատրաստվելու վերահաս հեղափոխությունը ճնշելու։ Ինչպես քանից անդամ առիթ են ունեցել արտահայտվելու դաշնակցության պարագլուխները, նրան չեցին մոռացել մայիսյան

շարժումների ծանր որերին թուրքերի հարսցած զդվարությունները, Զանգիբասարաւմ Սղբարայում և այլուր : Մայիսյան ապստամբությունը ձնչելուց հետո Սեպուհը հռովարում է կառավարության, թե ապստամբությունը ձնչված է, այժմ կարող եմ իմ տրամադրության տակ յեղած զինված ուժերի մի մասը ուղարկել Զանգիբասարի ապստամբ թուրքերի դեմ, իսկ մինչ այդ, նա ավելի վտանգավոր համարելով մայիսյան-բայլշեկյան շարժումները, ուժերը կենտրոնացրել եր բայլշեկյան շարժումները սխալիլ, ինչպես փորձը ցույց տվեց, բայլշեկյան շարժումները ավելի վտանգավոր ելին և ավելի խոր արմատներ ունելին ու ավելի ծավալուն բնույթ ստացան քան դաշնակցական մասունքից ու թալանից պաշտպանվող զանգիբասարցիների ապստամբությունը : Մայիսից հետո սկսվեց դաշնակների «կանոնավոր» դրւերի արշավանքը թուրքական շրջանների և գյուղերի վրա : Առաջին խոհ գրաված թուրք գյուղերից դաշնակցական «քաջերի» ուրած թալանի լուրը կայծակի արագությամբ, մի ակնթարթում տարածվեց գյուղից-դյուղ, Հայաստանի բոլոր ծայրամասերը : Ամենուրեք վստքի յեւան դաշնակցական «տղերքը» : Թալանի կարուս նրանց ախորժակը բացել եր, արյունը յեռ եր գալիս, դաշնակցականները զինեցին ու Փրոնտ քշեցին և քաղցած գալթականության, ապագասակարգայնացած տարրերին համոզելով, թե սովից ազատվելու միակ միջոցը թուրքերին մաքրելն ու նրանց ինչը թալանն է : «ՄԱՀ ԿԱՄ ԹԱԼԱՆ»—ահա ժամանակի առաջնորդող սկզբունքը Դաշնակները հասան վաղուց . պանծալի իրենց նպատակին : Հրի ու սրի մատնվեցին ասանյակ հազարավոր խոշողաւորների, Զանգիբասարում, Բայութ-Վեհիկուր, զաղ թուրք գյուղացիներ, Զանգիբասարում, Արյութ-Վեհիկուր, զաղ թուրք գյուղացիներ, Զանգիբասարում և այլուր : Հայաստանի «պալարը վեճարութամբ, Արքաբայում և այլուր : Հայաստանի «պալարը վեճարութամբ, կատարվածը «քնական ե», «արդար» և «փրավացի» ստորև կերպով ազգարարեց դաշնակների բերան «Հառաջ» թերթը, եր առաջնորդողի մէջ :

Կոտորածների ու հրկիղումների վողերգությունը հետեւ
մաշանի խարսկան կոմեղիան։ Գաղթականությունը, քաղցած ժո-
ղովուրդը յերկրի բոլոր ծայրերից աղի վրա վազող վոչխարի
նման հավաքվեց գրավված Մջաները։ Թարանում եր ով ինչքան
կարողանում եր, դաշնակ խմբապետները գրավում եյին բոլոր
բարձր հոգերը ու դյուքերը, թարանող զինվորներից խլում թան-
կաղին իրեղնները։ Հիշում եմ հատկապես Արդաքյանդ գյուղի
դաշնակներից մեկին՝ Հետադայում նույն գյուղի «փրկության

կոմիտեյի» անդամ, յերբ չըջակա թուրք գյուղերի գրավման լուրը առնելուց հետո, հանդիսավոր կերպով թալանի գնացող գյուղացիների առաջ հայտարարեց՝ «Դալլարն ընձանում», այսինքն մի ամբողջ գյուղ դաշնակ «իրկչի» սեփականությունն եւ և վու վոք իրավունք չունի մոտենալ նրան։ Հենց այդպես ել յեղավ. նա, մի քանի ուրիշ դաշնակ զոջերի հետ տիրեց այդ գյուղի ամենալավ ու ջրարբի հողերը մինչև խորհրդային իշխանության առաջին հողահավասարեցումը։

Զարժե այստեղ դբաղվել թալանի նկարագրությամբ։ Յեզ
կհիշեմ միայն մի բնորոշ փաստ, վոմն Սաշայի նամակը դրած
դաշնակ ջոջերից մեկին, վորը լիիվ պարզությամբ գծում ե դաշ-
նակցական կառավարության միաժամանակ քալանչիական դեմ-
քը։

«Զանգիբասարը գրավված է։ Ըստ հաստատ տեղեկությունների, այդ յերկիրը այնքան հարստություն ունի, վոր կարող է մի քանի անգամ ծածկել մեր պետական պարտքը։ Արդեն յերկու որ և այնտեղ կատարվաւ է մի չտեսնված քալան, տանում են ցորեն, զարի բրինձ, սամավարներ, խալիներ, դրամ և վուլիֆ՝ Վանեցիք (մարօդեր և ըռեկուլանտ) թափել են Ռւլուսանլու և բացել են իրենց խանութները առնելով և ամբարելով ամեն ինչ։ Ֆինանսների մինիստրությունը միայն յերեկ ուղարկել է յերկու խեղճ ու կրակ պարոններին առանց կազմակերպված ուժի։ Թալանը շարունակվում է և մի քանի որից այնտեղ վոչինչ չի մնա»—ահազանգում և դաշնակցական կառավարության շահերով մտահոգված թալանչին։ «Հերթը գալու յե արդեն ցանած ցորենին, բրինձին և բոստաններին»—շտապեցիք, հրճվում և դաշնակների կառավարության կողմից Զանգիբասարը ուղարկված թալանի մեզորը։ Պեպի և մահվան պատիժ մտցնել բոլոր մասնավոր (վոչ կառավարական Վ. Պ.) քալանողների համար, պետք է կոնֆիսկացիայի յենքարկել նրանց քալանածը (այսինքն՝ թալաններ թալանողներից Վ. Պ.), քշել այդ վայրերից բոլորին։ և վերջապես—ենց վաղվանից կապալով տալ մասնավոր անհատների կամ ալելի լավ և խմբակցություններին մնացած բոլոր արտերը և բոստանները հետևյալ պայմանով՝ (լավ լսեցեք) կեսը կառավարությանը, կեսը ձեռնարկողին, կեսը, կառավարությունն իրավունք ունի գնելու նորմալ գներով, թողնելով նրան անհրաժեշտ քանակություն։ Այսպիսի հարստություն ձեռք բերելուց հետո, մենք ստիպված չենք լինի մտածելու մի կտոր թերի մա-

պին»—ցինիկորեն հայտաբարում ե դաշնակցական թալանի լիուզորը :

Գրավմած թուրք գյուղերի թալանը առանց զանգաղելու շարունակում եր, յերբ հնչեց քալանի զիլավոր վարպետ, դաշնակցական կառավարության ձայնը, հրատարակվեց կառավարական թալանի որինագիծը, ըստ վորի թալանի 50%-ը թալանողները սղարտավոր եյին տալ գաշնակների կառավարությանը, Բայց ինչպես վկայում ե Շարուր գնացած հանձնաժողովի նախադահ Նիկոլ Աղբալյանը, (հենց ինքը այդ վողբերգության դպրագոր հեռուը, վորը գաշնակցության հանձնարարությամբ, դեռ չատ առաջ, կտղմել եր Ռաւսահայտուանի քարտեղը և նախագծել, թե վոնց պետք ե թուրքերին «մաքրեն», այդ մարդը այժմ յեկել եր դեռելու թե ինչպես ե կատարված իր և իր կուսակցության ծրագրածը) Հ. Հ. Վարչապետին տեղեկացնում ե, թե «վոչ վոյ մանովանդ զարականները և զենք ունեցողները տրամադիր չեն կառավարության բաժինը հատուցանելու», (ընդգծումն իմն ե Վ.Պ.):

«Եյս խառնաշփոթ կացության հետևանքով-այնուհետեւ գը-
ռում է Աղբալյանը—կառավարությունը մինչեւ այսօր ունեցած և
այնիվ քան կես միլիարդ կորուստ (!!!) դիտակ մարդկանց առե-
լով մինչեւ մեր մեկնելու որը Շաբուրից արտահանված է մոտ 200
հազար փութ ցորեն, վորի կեսը 100 հազար պետք է հասներ կա-
ռավարության (ավագը...), վոր շուկայի այսորվա զներով—
5000 ռ. փութը, կանե 500 միլիոն ռուբլի։ Մինչդեռ բերքի հա-
վաքման դեկավարը մինչեւ այսօր ստացել է վոչ ավելի քան 2000
փութ հացահատիկ» :

Այօմ մի հասարակ խնդիր :

— Դաշնակցական կառավարությունը Շարուրի թալանից, առանց վորեւել աշխատանք թափելու և քրտնելու (գոնե այդ մասին վոչինչ չի ասում ինքը Աղբալյանը), ստացել և 2000 փութ հա- ցահատիկ. գտնել ի՞նչքան «վնաս» և արել նա: (Ծանոթություն— Աղբալյան թվաբանության տվյալների համաձայն դաշնակցու- թյունը վնասուել է 100,000 փութ, կամ 500, միլիոն ռուբլի): Ա- վելին ինչ կարելի յե պահանջել այն կառավարությունից, վորը թալանի մենաշնորհ ձեռք բերելու համար մահվան պատիժ եր և ախտահետում քաղցից ու մահից իրենց գոյությունը փրկելու և այսատեսով՝ մասնավոր թալանողների վերաբերմամբ:

Դաշնակցությունը հասավ իր նպատակին: Աղբալյանը այսու
ի արող եք հսկաբանակ իր կազմած ծրագրով: Պատճության մեջ

կատարվեց նովկալին ու զգվելին : Դաշնակցական կառավարությունը մաքրապարդեց գրավված շրջանները հավը մաքրապարդող կատալի պես, «լրջար» հողերը հանդիսաւ կերպով բաժանեց իր անդամներին (Զարբեախ և այլն) ու գյուղի կուլտակներին, առեղծվեց մի տեսակ «անցողիկ կալվածատիրություն» : Վորպես «նոր Յերուսաղեմ» թուրքական շրջանները «խաչակիր» դաշնակների ձեռքով թարանվեց ու հրկիվվեց : Թուրք աղջաբանակությունը ցիր ու ցան մի մասը անցավ Արաքսը, մյոււսը քաշվեց լեռները, սպասելով գաղճակների անկմանը և խորհրդային իշխանության հասաւավելուն :

ԱՀա այս խուժումուժ որերին դարձյալ լսելի յեղավ պրոտէ-
աւարական ինտենքիոնալիզմի անվախ ձայնը.—

—«ԴԵՏՔ Ե ՄԱՔՐԵԼ «ՄԱՔՐՈՂՆԵՐԻՆ»

ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔ

ԱՆԱՐԵՒԻԱ, ԹԱԼԱՆ, ԴԱՍԱՀՅՈՒԹՅՈՒՆ

Մենք տեսանք, վոր դաշնակցությունն իր դասակարգային հ-
յության համապատասխան մի շարք ձեռնաբակումներով, մորճեց
ամելի ամրապնդել իր սոցիալական հենարանի՝ կուլակո-բուր-
ժուական տարրերի տնտեսական գիրքերը, վորն ինքնին յենթա-
դրում եր արդեն միաժամանակ հենց իրեն, դաշնակցական կառա-
վարության տնտեսական-քաղաքական դիրքերի ամրացում, հենց
նույն բուրժուազիայի շահերի համապատասխան պետականության
կառուցում :

Այս վոգով ել արտահայտվում է դաշնակցության կենտրոնական որպան «Հառաջ» թերթը, 1919 թ. № 2. առաջաբանում:

«Երերի բերումով դեռ բութուական կարգերում մեր կուսակցությանը վիճակված է պետական նավը զեկավարելու ժամբ պարտականությունը։ Այս ինչ ուրիշները պետք է անենին, ինչ սազական եք բարձուական կարգերի ներկայացնելիքիներին, ուրիշված ենք մենք անել(29)։ Մնիծյալ իրականությունը պահանջում է, և մենք հակառակ ենք հերքին ապրումներին (sic) Հարկադրված ենք սեփականատիրական կարգերում պետություն կառուցողների գերն ստանձնելու։»

²⁹⁾ Մօտ դեռ կան սացիրնալ-ուպորտումիստական հովերավ աշարժութ բնկերներ, գործնք տակավին շարունակում են գուշակցության մանր-ըուրիգուական, «ախտամիջութեան» լեռասաղությունը։ Դրանունից մի առնեաց մէջ

ի զարք և դաշնակցական թերթուկը «իբրերի բներումին» և
«անիծյալ իրականության» վերագրում բուրժուական պետական
կարգերի ստեղծումը, քանի վոր դա բղիքում եր դաշնակցու-
թյան սոցիալական եյությունից և նրա բուն նպատակն եր հանդի-
տանում : Ինչպես հայտնի յե, ցարական յերբեմնի գաղութ Հա-
յաստանում, ցարիզմի տաղալումից հետո իրերի գրությունը
միանգամայն այլ կերպ դասավորվեց . նրանք չունեցան այն ըն-
թացքն ու վախճանը ինչ մետրով լիայում : Այն պահին, յերբ
կենտրոնական Ռուսաստանում կոմունիստական կուսակցության
զեկավարությամբ բանվոր դասակարգը և աշխատավոր զյուղա-
ցիությունը հերոսական կոլիզ ելին մղում իմակերիալիստական
ինտերվենաների և նրանց տեղական գործակալության դեմ, հե-
ղափոխության այդ ծանր որերին ահա, Անդրկովկասի հակա-
նեղափոխական կուսակցությունները հայտարարելով սկզբում՝
Անդրկովկասի անջատման, ապա՝ «անկախությունների» հռչակ-
ման ակտը, յեռանդուն գործունեյության անցան մեկը մյուսի
հաշվին, վոչ միայն «կլորացնելու» իրենց տերիտորիաները, այլև
ստեղծելու այէ տերիտորիան կառավարող պետական իշխանու-
թյունը : Դաշնակցությունը նույնպես անցավ պետական իշ-
խանության կազմակերպման :

1918թ. ողոստոսի մեկին Յերևանում բացվեց Հայաստանի Հանրապետության կազմվեց առաջին կառավարությունը: 1919թ-ի ողոստոսի մեկին, ուղիղ մի տարի հետո, Հայաստանի պարլամենտը յեկավ փոխարինելու նախկին խորհրդարանը: Սակայն այս ամբենը ձեւ եր, ինչորու ասում է գաշնակցության նախկին պրեմյեր մինիստ Հ. Քաջազնունին «պարլամենտ չկար Հայաստանում, մի դատարկ ձեւ եր առանց պարունակության»: Պետական հարցերը քննության եյլին առնվազ ու լուծվում դուսփակ, դաշնակցական ֆրակցիայի սենյակում ու ապա հայտարարվում պարլամենտի ամբիոնից» (ընդգծումը մերն եւ Վ. Գ. 30):

կուռակցության հայտնի վորոշութից հետո անգամ, վերջինս, չեն քաղցկել առ-
ինիկ մէծ Խրչնդալին Հանրապետութանի (Բ.С.Ձ.) Հեղինակության աղ-
տակործել իրենց այդ բազահայտ հակառակացական հայցըների համար :
Դաշնակցութան «Հաւաք»-ի վերոնիշաւու բնդրժամանակական կեզծ արդեքը (մի կողմ թողած
իրաքանչյուղացան կեզծ արտահայտությանները) շատ լավ դառ և թէ մէ-
կի և թէ ճյուղի համար :

30) 2. Քաջազնունի

1924թ. «Հայրենիք» ամսագրի մեջ, Հայաստանի «Փրկիչներից» Սիմոն Վրացյանը, խոսելով այս ըրջանի պետականության կաղմակերպման հարցում դաշնակցության կատարած դերի մասին գրում եւ—

«Դաշնակցությունը աղաս ինքն իշխան կյանք թևակոխելով եր շինարական վողին հանդես ե բերել պետական չափերով»:

Թէ ինչ «պետական չափերի» և վոր «շինարարության» մասին ե խոսքը, Վրացյանը չի հիշում և վոչ մի փաստ, համոզելու ընթերցողին և այդ անկանակած ունի իր խոր պատճառները:

Դաշակցությունը վոչ միայն չկարողացավ (և չեր ել կարող) կաղմակերպել իր «անկախ» պետականությունը, այլ նույնիսկ անկարող գտնվեց շատ թե քիչ կանոնավոր հիմունքների վրա գնել արդ պետականության այս կամ այն առանձին բաժանմունքը։ Ել ի՞նչպես կարելի յե խոսել «պետական չափերով» արտահայտված շինարարության մասին։

Նախորդ գլուխներում մենք տեսանք թե ինչ «շինարարության» մասին կարելի յե խոսել դաշնակցական Հայաստանում, ամենքիս համար պարզ ե, վոր դաշնակները իրենց տիրապետության ընթացքում վոչ միայն մի հավաքուն չշինեցին, այլ և քանդեցին Հայաստանի բոլոր հավաքները (մասնավորապես ոռուների զաղաքները...)։

Թող Վրացյանը փորձի նախ և առաջ կուլ տա և մարսի այս անմարսելի ճշմարտությունը, նոր ապա կը զեկըչա «պետական չափերի համոզող շինարարության» մասին։

Արդ, վորո՞նք եյին այն հիմնական պատճառները, վոր դաշնակցությունը չկարողացավ քիչ թե շատ կաղմակերպված, ամուր պետական ապարատ ստեղծել։

Ընկ. Զ. Աշրաֆյանը «Անկախ Հայաստանի» իրավունքն ու պետականությունը» վերտառություն կրող իր հողվածում այդ հարցին հետայրական պատճառնն ե տալիս։

«Դաշնակցության և ժողովրդական կուսակցությունների ներկայացուցիչներից կաղմված կառավարությունն անկարող եր հաստատել վորեւ քիչանություն յերկրում՝ խորհրդարանի ըրջանում, վորովհետեւ չեր ինեված աշխատավորության վրա, դործում եր նրա դեմ։»

«Բացի այս հիմնական պատճառից (ընդունումն իմն ե վ. Պ.) շարունակում ե Աշրաֆյանը — կային և յերկրորդական պատճառներ»։ այնուհետև նա, առանց այլ և այլի, ըստ յերեվութին հագատալով և համաձայնվելով, բերում ե «Հառաջ» թերթի 1920թ.

Հունվարի № 10-ի «Պարլամենտական կյանքը 1919թին» հոդվածից խորհրդականի մասին հետևյալ կտորը—

«Շնորհիվ խորհրդի կազմի, նա միանդամից զրկվում եր վերնեւ չենարարական գործ կատարելուց Խորհուրդը կաղմված եր հայ իրականության մեջ գործող կուսակցությունների ներկայացուցիչներից հետեւյալ չափով՝ Դաշնակցականներ՝ 18, ոոցիալ-դամոկրատաներ — 6. առցիալստ-հեղափոխականներ — 6. հայ ժողովրդական կուսակցությունից — 6, մուսուլմաններ, — 6, անկուսակցական, — 2, յեղակի — 1: Ուժերի այս փոխարարերությունն անկարելի եր գարձում նորհրդի կանոնավոր աշխատանքները և կառավարության գործունեությունը։ Զիար կենարոն, վորի վրա կառավարությունը հենվեր, չկար մշտական մի մեծություն, վորն եր նախորոք գծած ուղին անշեղ չկար մշտական մի մեծություն, վորն եր նախորոք գծած ուղին անշեղ առաջարկությունը իրությունը փրկում եր յեղիների ներկայատանքին առցիւթյունը։ Այդ մի ձախից եր կախված (!) յերեմն այս կամ այն հարցի լուծումը։ չարկավոր արկադի եր դրությունը փրկել։»³¹⁾

Առաջադրված հարցի թե՛ հիմնական և թե՛ յերկրորդական պատճառները քննելիս, ընկ. Աշրաֆյանը, ինչպես տեսնում եք, յերկու դեպքում ել չարաչար սխալվում ե։

ԱՌԱՋԻՆ. —Նա չափազանց վտանգավոր լիրերալ մի թեղ և տռաջ քաշում, ըստ վորի դաշնակցության և «ժողովրդական» կուսակցությունների ներկայացուցիչներից կաղմված կառավարությունը, յերեւե կարող եր հենվել աշխատավորության վրա, և բարտ ընկ. Աշրաֆյանի անկարող ե յեղել յերկրում հաստատել համեմտարար ամուր իշխանություն, վարովհետեւ չի հենվել այդ իսկ աշխատավորության վրա։

Յեկ այս անմիտ ու անհեթեթ արգումենտը, ընկ. Աշրաֆյանի մոտ համարվում ե դաշնակցության որոք տիրող անարխիայի «հիմնական» պատճառը։

ՅԵՐԿՐՈՐԴ. —Սիսալվում ե ընկ. Աշրաֆյանը, յերբ անարխիայի գործում, թեկուզ յերկրորդական (վորովհետեւնա ավելացնում ե (Էջ՝ 184), վոր հետապայում, յերբ կառավարությունը դաշնակցականներից եր կաղմված՝ դարձյալ չկարողացաւ ստեղծել վորեւ իշխանություն)։ պատճառ ե համարում աղղայնական մյուս կուսակցությունների ներկայացուցիչների կառավարության մեջ մինելու փաստը։ Դրանով նախ վիճների կառավարության մեջ մինելու փաստը։ Վորովհետեւ ինչպես Քաղաքացիությունից ե վկայում։

«Անտական հարցերը բնուրյան ելիմ առնվազ ու լավվամ գոյ-

31) «Եռորդ» հանդես, 1928թ. գիրք առաջին, էջ՝ 185—84։

Ամենովելիովեց Քաջազնունին Դաշնակցության և մյուս կու-
սակցությունների ներկայացուցիչներից կազմված կառավարու-
թյունը քաջություն ունի Համարելու, վորպես դաշնակցության
բյուրոյի «ԳՈՐԾԱԴԻԲ ՄԱՐՄԻՆ», իսկ ընկ. Աշրաֆյանը հենվե-
տվ «Հառաջի» պրովակացիոն, ավանայուրիստական մանյուլքայի
վրա, Ֆիսամտություն ունի կարծելու, թե կրկնում ենք թեկուղ
յերկրորդական պատճառի, նշանակություն և ունեցել անարխիա-
լի ստեղծման գործում մյուս՝ վոչ-դաշնակցական կուսակցու-
թյունների տեղական իշխանության մեջ լինելը:

Բնկեր Աշբաֆյանն այստեղ ևս կատարում է վերին տօտիւ-
ծանի կոպիտ սխալ, համաձայնվելով Դաշնակցության և «ըուլ»
կուսակցությունների հակառակության փաստի հետ, զորը միե-
նույն և թե սոցիալ-Փաշիզմի (միաժամանակ դաշնակցության)
իդեոլոգ՝ ԴԱՎԻԹ ԱՆԱՍՈՒԻՆԻՆ, հակառակ դաշնակ «Քրկիչ»
Վրացյանին։ Այսպիսով, դաշնակների որոք տիրող անարխիայի
պատճառները պետք են փնտրել վոչ թե կառավարության կոռլի-
ցիոն սիստեմի մեջ, վոչ թե նրանում, զոր դաշնակցությունը չեր
հենցում աշխատավորության վրա (զորովհետեւ նաև չեր ել կարող
հենվել), այլ բոլորովին ուրիշ տեղ։

Դաշնակցությունը չկարողացավ և չեր ել կարող իր ափքաղի-
տության ընթացքում, Հայաստանում ստեղծել «անկախ» պետա-
կան իշխանություն, շատ թե քիչ տանելի պետական ապարատ,
վերովհետեւ նա ի վիճակի չեր ապրելու «ռազատ» կամ «ինքնիշ-
խան» գոլության շրջան։ Փաստուշն դաշնակցական Հայաստանն
իմպերիալիստական պետությունների վասալն եր և նույնիսկ մանր-
խնդիրները չելին վճռվում առանց այդ իմպերիալիստաների մաս-
նակցության։ Այսպես, որինակ՝ Յեղիպտոսում դիվանագիտական
ներկայացուցիչ ուղարկելու հարցը «աղատ» և «անկախ» գաղնակ-
ցական կառավարությունը չի վճռում, վորովհետեւ ինչպես Պոլսի
գիլֆանագիտական ներկայացուցիչ Թահթաճյանն ե Հայունում,
դաշնակցական կառավարության արտօաքին գործերի մինիստրու-
թյան ուղարկած 1920 թ. Հոկտեմբերի 20-ի, № 910 գրության մեջ
«Անգլիական կառավարությունն առաջին վաղաժամ ե գտնում.

³²⁾ Հ. Քաջազնունի — «Հ. Հ. Գաշնի. անելիք չունի այսկա» էթ. 43.

վոր մենք ուսենանք դիվանագիտական ներկայացուցիչ Յազիպոս-
սումբ»²³):

Ասենք, դաշնակցականները հենց իրենք ելին առաջադրում բութուական մի ուժեղ պետության պրոտեկտորատի տակ ապրելու հարցը։ Իսկ վերջիններս, ինչպես դաշնակցականներին ել քաջարյանի յէ, յեկել ելին Անդրկովկաս, նույն թվում ուրեմն և Հայուսան, վոչ թե դաշնակցական կամ մենչեմկ-մուսավաթական «անկախ» պետություններ հաստատելու, քանի վոր գրանից վոչ մի շահ չունելին, այլ հենց իրենց՝ Անդրկովկասյան հակածեղափոխականների կամ ըսվ յեկել ելին դեպի Արևելք տարածվող բայլ-շեփողի դեմ պատճաշ կանգնեցնելու և Անդրկովկասը գաղութացնելու համար։ Հենց այս ուղղությամբ ել խորացնում ելին իրենց աշխատանքները, Անդրկովկասը և Մերձարևելյան մի շարք յերկըլըններ գաղութանացնելու տեսչով բռնկված իմպերիալիստական պետությունները։ Մյուս կողմից՝ պակաս նշանակություն չուներ գաշնակցության քաղաքականության հետևանքով առաջացած տնտեսա-ֆինանսական և սուրբանների բացակայության խնդիրը։

Այս հարցը բավականաչափ լուսաբանված և սեր առ
թյան առաջին զլուխներում։ Զեմ կրկնի : Կէիշեմ միայն պետական
ապարատի և պետական պաշտոններության գրությունը : Դաշնակ-
ցության պետական ապարատում աշխատում ելին մոտ 16 հազար
հոգի, բաժականաչափ ուռացացած՝ ապարատ, բայց բոլորն ել
(չաշված, իհարկե, դաշնակցական վերնախավը), քաղցած, բո-
լորն ել քերկ ու բորի՛լ : Ինչպես պետության բուս մերկ ու սո-
ված քաղաքացիների, նույնպես և պաշտոններության միակ մատ-
չուածյան առարկան իրենց Փիզիկական դուրսթյունը սրբելու
խնդիրն եր : Պետականության ու ապարատի կարգավորման հար-
ցերը նրանց մոտ հակար յերրորդական տեղն ել իսկի չեր գրա-
վում, շատերի մտքովն անդամ չեր անցնում : Վորպես ապացույց,
մասնոթանահանք դաշնակցական մամուլում և արիթիվներում այս մա-
սնոթանահանք դաշնակցական մամուլում և արիթիվներում այս մա-
սնոթանահանք դաշնակցական մամուլում և արիթիվներում այս մա-

Պատական պաշտոնյաների սյուրբագալ և ու ու
թվի հոկտեմբերի 25-ին Մինիստրների Խորհրդին հաջոյազգագլած
մէջ գէկուցադրի մէջ մենք կարգում ենք —

«Պետության պաշտոնյամերի նորկայութա ռազմա և բարեկա ապահովելու հրամա ամենատարբական կարիքները նույնիսկ նվազա բարեկա ապահովելու հրամա ամենատարբական կարիքները նույնիսկ նվազա

23) Տեսական կենտրոնական արխիվ, Փոնդ 65, գործ № 111, էջ 230

Գաւյն շափերով։ Այս հանդաժանքը անդրադառնում և անժիշտապես ողեատական գործերի վրա։ Պաշտոնյաները չեն կատարում ու չեն ել կարող կատարել բարեխնդուրեն իրենց պարտականությունները։ Նրանց ամ դաստիքը, ուշքը և միտքը կենտրոնացած են որվա ապրուստ հայրայրելու վրա ու պետական աշխատանքով լրջորեն պարապելու համար վոչ յեռանդ և մնում, վոչ ժամանակ։ Մյուս կողմից ծայրահետք կարիքը ծնունդ և առաջի ամեն տեսակ զեղարարությունների, կաշտակերության ու գողության։ Զեղարարությունները խոշոր ժամկան և ստանում նաև այն պատճառով, վոր պաշտոնյան վատ վարժական կամ դատական կամ դատական հետապնդման յերկու շատ չնշն է, վորովինան յերկութը լնդիանուր և առ լայնածարքայն համար։ Պետ պաշտպանությունը այն անհրաժեշտ գործիքն է, վորի միջոցով պետությունը պիտի կազմակերպի իր կյանքը ու իրավակարք հաստատի։ Յեթե այդ գործիքը ի վեճակի չել գործելու յերկիրը դատավարաված և անիշխանության։ Անապաստան, անոնթի, ուժապառ, անձնական ու ընտանեկան ծանր հոգերով կաշկանդված, չետեապես աշխատանքի անընդունակ և անխուսափելիորեն զեղարար պաշտոնյաներով չել վոր պիտի զեկավարի և կանոնավորի պետական կյանքը։ Պետք ե բարվոքի պաշտոնյաների դրությունը, — գոնեն նրանց որվա հացը ապահովեցնելու չափով։ Սա մեր այս որվա իրականության հերթական, ստիպողական, ու անհետաձգելի պահանջն է։

1919 թվի վերջերին փոստ-հեռազբատան ծառայողները չկարողանալով այլևս տանել գաշեակների ծանր լուծը, նրանց ստեղծած գժահային պայմանները գործադուլ են անում։ Դաշնականաները վախեցած շտագում են պարլամենտի անդամներ՝ Տերտերյանի և Զարաֆիանի միջոցով բանակցության մեջ տանել, բայց իրուր, փոստ-հեռազբատան ծառայողների խառը կոմիտիան ներկայացնում և իր խրոխտ պահանջները՝ 1) Յերեքարթի գեկտեմբերի 16-ին վճարել ամեն մը ծառայողին՝ 1500 ռուբլի և հաշիվ նոյեմբեր ամսվա հավելման. 2) մինչեւ ունկաների 15-ը տալ ոռնիկները հավելումների մնացորդներով։ Դեկտեմբերի 16-ին մինչեւ ժամը 12-ը չստանալով մեր վերջական պահանջների բավարարումը — խառն կոմիտիան ստիպված կինքի իր ձեռքի յեղած բոլոր միջոցները գործադրելու։

Դաշնակցության պետական ծառայողների գրությունը ուսումնասիրողի համար թանգարժեք տեղեկություններ և առաջի գիշանի աշխատաղների՝ մինիստր նախագահին ուղղած հետևյալ գիմում։

«Մինիստրի խորհրդի մեծարդու պ. նախադաշնություն խորհրդի դիվանական պաշտոնյաներից Հայարարություն։

Ուսաբության առնելով այս հանգամանքը, վոր մինիստրների խորհրդի պահանջանքած ոսմիկներով ավյալ պայմաններում միանդամայն ան-

համար և մեր ընտանիքների համար գեթ չոր ու ցամաք հացը միայն հայրենիքների կամ կյանքի թանգությունն զնալով որավուր ծավալվում և առաջի առաջական անտանելի ու գդվարին կացություն, որանով ինդրում ենք ձեզ մեղ տրվող ոռնիկները ևս վորոշ տոկոսով բարերացնել, վորով թերեւ հարավոր մինի քարշ տալ մեր և մեղ ապավինած ընտանիքների սպակական գոյությունը։

Դիվանի գործավար՝ (ստորագրություն)

Դիվանի ողնական (ստորագրություն)

Դիվանի գործառնուհի՝ (ստորագրություն)

Փառավարական լրաբերի» քարտուղար՝ (ստորագրություն)

«Կառավարական լրաբերի» ցրիչ՝ (ստորագրություն)

23 նոյեմբերի 1928 (պետք և կարդալ 1920) թիվ։

Եւրեան

Ի՞նչ են ասում այս փաստերը։

Այս փաստերը խոսում են, աղաղակում այն մասին, վոր պետական պաշտոններությունը գաշնակների որոք տնտեսական և քաղաքական ծայր աստիճան անտանելի, դժոխային պայմանների մեջ պետականության ու ապարատի կաղմակերպման և կարգադրման հարցերը չել վոր զբաղեցրել են գաշնակցության պաշտոնյաներությանը, այլ իրենց և իրենց ապավինած ընտանիքի սոսկական ֆիղիկական գոյությանը։

Գաղտնիք չել, վոր քիչ թե շատ ամուր պետական ապարատ, իր որենսդիր-գործադիր մարմիններով գաշնակների ժամանակի չի ինչպես ներքին գործերի մինիստրի ողնական Սահակ Թոռոսյանն և վկայում 1920 թվի Հուլիսի 2-ին նախարարների խորհրդին ներկայացրած իր զեկուցադրում, «Ռուսական հին (ցահարդին ներկայացրած իր զեկուցադրում, «Ռուսական վ. Պ.) որենքների մնացորդները, ժամանակավոր կառավարական, վ. Պ.) որենքների մնացորդները, կովկասյան ունիմի ու կովկարության հարաբերակած որենքները, կովկասյան ունիմի ու կովկարիատի ու Հայաստանի պարլամենտի որենքները խառնվել են միասնական իշխանության մասին կարող և խոսք լինել։ Ահա թե այդտեղ ի՞նչ իշխանության մասին կարող և խոսք լինել։ Ահա վասիկ և այդ «իշխանության» բնութագրումը, վորը տվել է Հայաստանի Աշխատավոր» թերթը, 1919 թ. № 81-ի խմբագրականում։

«Մեր յերկիրը փաստորեն գեռ չունի վոչ ժողովրդական իշխանության խորհրդի դիվանական պայմաններից Այս յերկում որենքն ու իրավունքը

և ժողովրդի կամքը չեն թագավորում միահեծան, ոյլ բանությունը կամայականությունն ու անիրավությունը վերջին լիազորվածի ու զիմվածի: Առանց մի նշանախեց անգամ չսփառանցութեան՝ այս յերկրում վոչ մի անիրավություն կամ հանցանք չի պատճել: Պատճի արգանք գոսացած է բացարձակապես... մեր պաշտոնեյության 90 տոկոսը զեղծարար է: Զեղծում ու կեղծում են ամենք, ալանքան են անում բոլորը, ովքեր «ծույլ չեն», վորովինուն վորքան շատ են զեղծում ու հափշուակում այնքան բարձրանում է նոցա աստիճանն ու պատիվը. միլիոնների զեղծարարները, պիտակն գույքեր հափշուազենք այսօր ել «ՕԵԽԱՊԵՆԻ» ստանդով, բազմանում են ամենապատասխանուու պատուիմ...

«Յեվ այսպես զեղծում ու կեղծում, գողանում և բալանում են ամենք: Գողացող սերանը «յուլոտում» և պաշտանող բերանին, «անքը լվանում և ձեռքին» և հափշուակություն ու կերեցումը շարունակվում է բացարձակ ու սանձարձակ: Յեվ վորովինուն վոչ վոք չի պատճեւ, կամ յերենն միայն առ գողացողին կախում են, իսկ ձի գողացողին պատիվ ու գիրք տալիս, ուստի հասարակությունն ու ժողովությը լվում են, կարցնում ամեն հավաս դեպի արդարությունն ու իրավությը և այս հուսահատ անտարերությամբ քարշ տալիս իրենց գոյությունը, իսկ պաշտօնյան ավելի սանձարձակ դառնում և հայտարարում «ինչ պարլամենտ կամ կառավարության, այդ բոլորը յեն են, ինչ կուզեմ կանոն» և վորովինուն ինքն ու կրակ ժողովությը տեսնում է, վոր իրոք այդպես ե, վոր նոն գարձայլ վոչ մի ուրիշ արդարություն և իրավունք չե դանում, ուստի և իր կյանքի համար օկզունը և դարձնում — «շան վոտք չեն կոլիի»...

Յարական գեներալ, պատրիոտ Ղորղանյանը, Ղարսի նահանգի քաղաքացիական մասի նահանգապետը, 1919 թ. մայիսի 18-ին ներքին գործոց մինիստրին ուղարկած իր մի գեկուցման մեջ հետեւյալն է գրում. —

... «Մեր վարչական ապարատի ուղմական, մարտական կառուցվածքը չի կապվում մեր որերի գեմոկրատական (!!) առաջադրութերի և միամիայն արգելակում և վարչական բարդ ու պատասխանատու դործը... Յերե իշխանությունը հենվում է միմիայն ազնիվ թրի վրա և իր քաղաքացիական ուղմական լիազորությունները կարգավորում ե կամայականությամբ ու տպավորություններով, ապա դժվար թե այդ իշխանությունը զնում է պետական ուղիով և դժվար թե նա համապատասխանում է յերկրի և ժողովրդի պահանջներին»:

Վերոհիշյալին ավելացրեք դաշնակցական կառավարության շրջանում լայն տարածում ստացած խմբակետական, մառուզերիստական բանդաների ստեղծած բարեկրն ու կարգերը և այն ժամանակ պարզ կլինի, թե ինչու դաշնակցական Հայաստանում անպայմանուրեն պետք ե տիրապետող հանդիսանար անարիխան: Սակայն այս հարցի վերաբերմամբ ևս, շատ հակասական կարծիք-

ներ կան դաշնակցական դրականության մեջ: Իրենց սպիտակ ժամուլում դաշնակցությունը, նրա «պատմագիրներն» այն աստիւծան պայծառ գույներով են նկարագրում դաշնակցական Հայաստանի և ներքին կյանքը, այնպես են սվաղում պատմական իրողությունները, այն ձևով են արդարացնում իրենց, հատկապես դաշնակցային հայ աշխատավորության առաջ, վոր առաջին իսկ հայացքից կարծեք, թե Հայաստանի ներքին կյանքը դաշնակների որոք ընթացել է շատ նորմալ և առանձին վոչինչ չի պատահել: Բայց, յերբ մենք թերթում ենք Հայաստանի պատմության դաշնակցական եցերը, յերբ ավելի խորն ենք թափանցում այդ իսկ պատմության մեջ, մեր առաջ բացվում և բոլորվին մի նոր աշպատմության մեջ, մեր առաջ բացվում և բոլորվին մի նորմագրասերէ նկարագրածին, մէկանդամայն հակառակ դաշնակցականների նկարագրածին, կոչմարային յերեսույթներով, դժոխային իրողություններով, սարսուեցուցիչ դեպքերով լի Հայաստանի ներքին կյանքը դաշնակցության լարիգինթոսը:

Բացում ենք դաշնակցական Հայաստանի պատմության ու բացում իսկ հանդիպած եջում ահավասիկ, ձեղ հետ խոր գերքը, առաջին իսկ հանդիպած եջում ահավասիկ առաջինը Սահակ Թորոսյանը:

«Հանրապետության կազմակերպության առաջին որերից հետ ներքին կյանքը գտնվում և վերին աստիճանի խառնակ վիճակում... Հենց այս որերը ել հանրապետության ներքին կյանքը նախանձելի չե, վորոշ տեղերում նույնիսկ անառանձիւ յե քաղաքների համար: Մարդկանց մը ահավին բազմություն սպառազինված լավագույն զենքերով, ցրված մը ահավին բազմություն անկանություն բոլոր անկյուններում: Չունենալով վոչ Հայաստանի հանրապետության բոլոր անկյունների վիճակում... Հետո կամ կամաց մի հաստատուն պարապմունք, և վոր կարեորն ե, դյուրին ձևով բացարար մի հողովուտի միջոցով հարստանալը կերպածակ հափշտակությամբ և կողովուտի միջոցով հարստանալը պեկով քրտնուա վաստակից, նրանք իրենց նվիրել են ասովետական արշավանդին, մի որ գեակի հոգին, մի որ թարսայայ, մի որ գեակի Զանգի բասար, մի որ գեակի կողին, մի որ գեակի այլն: Այդ բոլոր արշավների մզիչը ափարի տենչ է, կոզու և այլն, և այլն: Այդ բոլոր արշավների մզիչը արժական արդերությունները կատար և արդենք: Պատուի հանցանք է, բարոյական ըմբռնումը, վոչնշացել և արդենք:

«Յերկրի կյանքը վրդովող յերկրորդ հանդամանքը գաղտնի ավազանի կախմբերի զոյությունն է: Արանք կազմված են զլիսավորապես բնիկ կախմբերի զոյությունն է: Արանք կազմված են լինում զլավորապես ճանապարհուատրերից, վորոնք զարանամուտ են լինում զլավորապես ճանապարհուատրերի վորոնքուակով սպանում են ճամրորդների վրա և շատը կողովուտների մականությունն է: Հայաստանի բոլոր մասերում այդ յերեսույթը նկատելի վում է: Հատուկ ուշադրության արժանի յե ծագմանի կաթիւուն, ելզ միածնից — Աշտարակ Յերկան և Յերկան-Աշտարակ ընկնող ինուզիների առյունը:

Հունվարից մինչև այսու յեղած սպանությունների և թալան ների գեղաքերն արդեն հարյուրի մոտ են: Մեծ հուզում առաջացրեց Սոսկայի կոմիտեի Աշտարակի վարպանոցների կառավարիչ Գ. Գյանց ջեցյանի սպանությունը: Բայց յես սկսէ ասեմ, վոր նբանք մի շարաբ

առաջ մի շարք ժարդիկ են սպանվել: Սպանվել են խեղճ ու կրակ Արա, բանցիներ: Յերևանից Աշտարակ տանող խճուղու մոտ «մի զինի»-ի ձորը, մի սպանվածոց և անցորդների համար, Այնուն յերկու որլա ընթացքում մոտ հայուր մարդ է սպանվել...

Շիրակի գյուղերում պարսակելի բռնություններ են կատարվում ամեն
ար։ Կարսի նահանգը յենթակա յէ մի սարսափելի ահաբեկման։ Կարսի
ուստ գյուղերի ներկայացուցիչները հունիսի 29-ին ներկայացան ինձ
(թ., թ.-յանին (Պետ. պաշտոնյա), վորի զեկուցումից թորոսյանը կա-
տարում ե այս մեջբերումը Վ. Պ.) և արտասիլելով նկարագրեցին իրենց
դրությունը։ Նրանք այստեղ գտնվում են որենքից գուրս։ Աս են որ Հա-
վաշտակում են նրանց ձին, կովը, յեղը, և այլն, և այն։ Կարսի նահան-
գապետը, վոր սովորաբար սիրում ե իր նահանգադը լավ գույներով ներ-
յացնել, տարբերական հեռագիրներ և խփում խմբերի խժդժությունների
մասին, իսկ Շիրակի նահանգապետը, իր անզորությունն և Հայունում
նահանգում ավելի քան 6.000 զինված անձանց գեմ։ Սակայն ինչու հեռու
գնանք։ Մեր քըի տակ Եջմիածնի գալառում որը ցերեկով նուխցիները
քանի անդամ են Հարձակվել գնացքի վրա։ Վերջին հարձակման ժամա-
նակ սպանեցին 41 մարդ, վիրավորեցին 82-ը։ Ինչ է Զամբիրասարը —
Ավերիչ ուժերի մի կատաղի մրցամ։ Ով չի քալանի այնուեղ, չզիտեմ։
Յեկ այսոր այդ արարքների համար վոչ վագ չի պատճել և նրանց հո-
գում ամրացել ե այն Համոզումը, թե Հայաստանում կան վորոշ մար-
դիկ, վորանք քալանի, կողոպուտի և սպանության համար չեն պատը-
վում։

Որինակները կարել ի յե յերկարացնել, սակայն այդ ավելորդ և դրությունը շատ պարզ է։ Յերկիրը լին ի բանդող — քայլայող տարրերով։ (Ընդդժումները մերն ե վ. Պ.)։

1920 թ. Հունիսի 29-ի № 967 գեկուցադրի մէջ, Յերեվանի քաղ. միլիոնապէտ Զալալյանն ի պատասխան Ն. Գ. Մինիստրության № 5959 գրության, տեղեկացնում ե, թէ՝

«Հրացանաձղությունը, վորի վերաբերմամբ Դուք պահանջել եյիք միջոցներ ձեռք առնել, յենել եր գլխավորապես այն անձնավորությունների կողմից, վորոնք նորեքո վերադարձել են Զանդիբասարի Քրոնակից. ձեռք բնած դրամներով հարսում եյին զնդակներ արձակում և շարունակ բացականչում «Զանդիբասար ոտիլչային» այդպիսիներից վոյ պաշտոնյաները ձերբակալված են և բանտն են նստեցրած հասարակական կարգն ու անդորրությունը խանգարելու համար, իսկ պաշտոնյա զինվորները և միլիցիաներները ուղարկված են իրենց պետերին համապատասխան դրություններով:

Միլիցիայի բեգերվի միլիցիոներ Խաչատուր Զարդարյանը և զինվոր Հրամանատարության շտաբի պետ Յերվանդ Հարությունյանը լինելով սատիկ հարբած կրակելով հրացաններ 100-ից ավելի զնդակներ ասել են «Զանդիքասար սովորական»³⁴⁾:

Յերեանի «Զանգ» թերթի 1918 թ. պատմում Ա-ի համարում «ներք
քին կյանք» վերտառություն ունեցող Հոդվածում մենք կարդում ենք
«Երեկի յերեկոյան քաղաքային այլում մի քամնելի զեղք պատմա-
ւեց. մասուզերների համարակերի տակ զնդակահարվեցին յերեք ան-
ժեղ քաղաքացիներ: Դեպքի առիթը ասում են յեղել և ամենազուհիների
ուն կոսներ իդղիբեցիների և յերեանցիների մեջ հայհոյանք և տեղի
ունեցել և այդ հոգհոյանքը պատճառ և գարձել յերկու հակառակութ-
խմբի բաժանվելու և մասուզերների զիմելու: Դեպքի արդարացի կամ
անարդարացի լինելը չի մեզ հետաքրքրում — շտապում և արձանադրել
թերթի խմբազրությունը, սարսափելով այդ նույն մասուզերիսներից
իրենց սպառնող վտանգից, մեզ հետաքրքրով այն և, վոր անարխիան
զնալով մեծանում և մասրիխան վոչ թե հանրապետու-
թյան խուլ ու հեռավոր անկյուններում, այլ հանրապետության մայ-
քաղաք Յերեանում, բարձր (!) կառավարության աչքի առաջ: Սա-
ծաղը և, սա անհանդուրժելի յե: Պետք և ամենակարուկ միջոցի գե-
մել ամենա վերջ տալու նմոն խայտառակություններին: Հազորա-
վոր մասուզերներ են խլրում Յերեանի զլխավոր փողոցներում և զրա-
սանի միակ վայր քաղաքային այլում: Պետք և վերջ տակ այդ անհո-
մայլ կացությանը:

Միանույն թերժն իր նոյեմբերի 7-ի «Շնչառած» վերսադրությանը պատճենականում դրում է, թէ՝

«Հայաստանի հանրապետության մարյաքաղաք Յերևանը՝ Արմենիա
ամսվա բնթացքում շահատածի վայր և գտաել։ Որ չի անցնում, վոր այս
կամ այն թաղամասում, մեկ կամ յերկու տուն կողոպուտի չենթարկո-
վի, այս կամ այն փողոցում որը ցերեկով տեղի չունենա սպանություն-
ներ։ Եթեանի մեջ արդեն բուն են զբել ինչ վոր հանցավոր շայկաներ,
վորոնք սիստեմատիկ կերպով ահարեկման են յենթ րկում խաղաղ
ազգարնակությանը։ Այդ պատճառով քաղաքում ստեղծվեն և մի խեղ-
ազգարնակությանը։ Վեր պատճառով քաղաքում առանց այն ել գլխաւորած ո-
տակն ու վրա յեղած նորմալ կյանքը...»

Հայաստանի խորհրդարանի կառավարության ու գլուխ է ու ամենամեծ պատմական մասն սկզբանից յունները աշխի առաջ կատարվող նման սկանդալներն ու ավաղակությունները ամենից առաջ վիրավորական ու վարկարեկիչ են հենց այդ հիմնարկությունների համար։

Ամենախիստ միջների պիտի դիմել այլուր ամենախիստ մարդկան բոլոր գողութեան ու զաղտնի շայկաներից, անմիջապես մաքրելու նման բոլոր գողութեան ու զաղտնի շայկաներից, այլապես վորեւել իրավակարգի մասին խոսելը ցնորք պիտի համարել:

Գողի ու ավագակի լուծը ամենից սովորակը՝
Նշտի կովել խստորեն, առանց ինայելու վորեն Տեղին, Հակառակ գեղ-
քում պետականության գտղափարը, վոր առանց այն Ել թույլ ե մեր
ժողովրդի մէջ եւ ավելի կթուլանա: Գլուխ բարձրացնող չանտաժը
ու անհաջող առ անհաջող անհաջող անհաջող անհաջող անհաջող անհաջող:

Մարտի առաջնապես լր բար է շ ։
ՄԱՆԵՐ առանձնապես վոչինչ դեմ չունենք «Զանգի» հաղորդած

³⁴⁾ *Sku* *Գետ.* *Կենտ.* *Արխիվ* *Ֆ.* 67. *Գործ* 1839 49^o 126.

վերոհիշյալ տեղեկություններին, սակայն չենք կարող չկատարել մի անհրաժեշտ լրացում, վորը չի անում և չեր ել կարող անել առաջն, վոր վոչ միայն մայրաքաղաքում, այլև ամբողջ Հայաստանում կատարվող անարխիայի, գողության ու ավաղակությունների, թալանի, շանտաժի և մարդասպանության հերոսները, հենց իրենք դաշնակցականներն եյին, Հայաստանի խոկալան կառավարիչներ՝ դաշնակ-խմբապետները, վորոնք ազատ ու անզատի կատարում եյին ամեն բան, ինչ նրանց գուրք եր դրուին, ինչ կամենում էյին:

Ի՞նչպես եր դրությունը գալառում: Դաշնակների ծանր ու սպանիչ լծի տակ, տնտեսական անկման, նյութական-քաղաքացիան կյանքի անմիտար պայմաններում, իր գոյության վերջին որեն ապրող աշխատավոր գյուղացիությունն անբաժին չեր մնացել Դաշնակցության և այս «գոհարներից»: Գալառը — գյուղացիությունը ևս հեծում եր դաշնակ խմբապետների կամայականության ու կապրիդի, թալանի ու ավաղակության խեղդող մըթնոլորտում: Հայաստանի անխտիր բոլոր գալարներում իշխում եր անարխիան, լայն մասսական չափերի յեր հասել գողությունն ու ավաղակությունը, թալանն ու մարդասպանությունը:

ԴԱՐԱԼԱԳՅԱՅԻ գալկոմից, 1919 թ. հուլիսի 28-ին հեռագրում են ներքին գործերի մինիստրության հետեւյալը....

«Գյուղում և շրջակայքում ապաստանած ալարակալին խմբերն գուժակայի նորմալ կյանքը խանգարում են ամենօրյա քաղաքաներով, տնտեսական տագնապ տուազգրին»:

ՆՈՐ-ԲԱՅԱԿԵՑԻՑ վոմն Արտաշես Մուրադյան ներքին դոր մինիստրին ուղարկած իր մի հեռագրի մեջ հայտնում ե՝

«Երշանում անիշխանությունն զնարով հակայական չափերի յի հասնում, վոստիկանական իշխանությունն անհանդուրժելի վոտնձություններ և կատարում, որենքի սահմանում կաշառակերությունն հըսկական ծավալ և ստացել, կատարվում են այնպիսի բռնություններ և զաղանություններ, վորոնք Մուլթաների իշխանության միայն հայրենասեր հերոս զինվորականի և տարարախտ հայրենիքի թալանառ գալակների ազնիլ բարեկամի հանդեղ կատարված սոսկալի զաղանառ թյան համար». (վերջին պարբերությունը բնադրում աղաղաղված եւ հավանորեն հեռագրիչի միջոցով. Վ. Պ.):

ԴԱՐԱԼԱԳՅԱՅԻ ՇՐՋԱԼԱՅԻՑ 1918 թ. գեկտեմբերի 30-ին «Մշակերթի թղթակիցը հայտնում ե, թե՝

«Վերջին ժամանակներս յերկան են յեկել ավազաներ, վարությունը լուրջ շրջանը եյին աշխատավոր գյուղացիական Միությունների»:

Վրա և քաղաքում ու կաղողուում են նաև պարագաներին, վորի պատճենով գյուղացիներից շահութ գուրք չեն գալիս տիկից իրենց առարձ եղանակությունները:

«Գյուղացու ձայն» թերթը «Թալան և սպանությամներ» վերաբերով հոդվածում Եշմիածնի գալառի մասին գրում ե. — Ըներկա ապրիլի 2-ին Յեղվարդ-Յերեվան տաճող ճանապարհի վրա մինի գուրք ասված ավաղականոցի զեկավարությամբ սպանված են գյուղացիներ՝ Յեղվարդցիներ Արշակ Բուղալյան, Ղուկաս Մելքոնյան, Արտեմ Միհթարյան, Գարսելան Նարինյան, Յեղվարդի վերաբերայան, ականջները... Հանգալուները Յեղվարդի վերաբերայան կապէ տաճկահայ Բաղեղամյան և Ալափարս գյուղացի Սարիբեկյան կապէ բարձրացուցիչը Բուղարությունները հոչուակած են՝ բոլորի կոկորդությանը: Բուղարությունը կապահանությունները բուղարությունները են ապար գենքով, կտրել և տարել են նաև մի քանիսի քերը կտրված ականջները... Հանգալուները չեն ձերբակալված: Յերբ պետք ե վերաբերա ականջները... Հանգալուները իրեն ապահով զդա այս լեբեդապես աշխատավոր գյուղացիությունն իրեն ապահով զդա այս լեբեդապես աշխատավոր գյուղացիությունն իրեն ապահով զդա այս լեբեդապես» 35):

ՄԵԾ ՂԱԱՐԱՔԻԼԻՍՈՅԻ հասարակության 1919 թ. հուլիսի 18-ի մի համախոսական վճռի մեջ մենք կարդում ենք. —

18-ի մի համախոսական վճռի մեջ մենք կարդում ենք. — Ավեմիս ու կես առաջ ամբողջ շրջանի զանազան վայրերում տիրում եր անարխիան, յերբ բուն Ղարաբիլսայի հասարակությունը արսափով եր ամբանցնում իր որերը չնորհիվ չարգուրծների, մարդասպանների և տապերիսանների բռնած մի շարք սարսափեցնող գործողությունների, ինչ ապերիսանների բռնած մի շարք սարսափեցնող գործողությունների, ինչ անկումներ գործել խաղաղ քաղաքացիների վրա, գողանալ գեղջուկի մեջ հակումներ գործել խաղաղ քաղաքացիների վրա, գողանալ գեղջուկի մեջ ակառյուր (մի բառ աղաղաղված Վ. Պ.) և այլն, և այլն» 36):

«Աշխատանք» թերթը 1919 թ. ապրիլի 26-ի «Հանրային ան-

դորությունն ամենից առաջ խմբադրականում գրում ե. — Դորությունն ամենից առաջ խմբադրականում գրում ե. — Գրեթե ամեն նոր և ամեն կողմէ մեղի հասնեն զողության, մարդապահության, թալանի ծեծի ու բռնությանց լոււնը, Վազարչապատեմ մեջ ներկա ամսույս սկզբից հաշվելով տառն և հինգ որվա ընթացքին անդի ունեցեր և 15 մարդասպանության գեղք, այսինքն յուրաքանչյուր անդի հոգի զուգեր և անհայտ ձեռքեր: Միայն ապրիլի 17-ին տեղի ունեցած գործությունների մեջ հոգի զուգեր և անհայտ ձեռքեր: Նույն պատկերը հարակից հավենացեր և մարդասպանության 4 գեղք: Նույն պատկերը հարակից հավենացեր և տվելի այլանդակ զույներով գոյաւթյան ունի և մյուս լուսներով:

Վերջացնենք: Անարիխիայի, թալանի ստեղծման դործում բանականի տեղ եյին գրավում դաշնակ խմբապետ-մասուդերիստները: Նրանց ինելագար քաղաքականությամբ, նրանք յերեսմն լիակատար իրենց ինելագար քաղաքականությամբ, նրանք ապահով գոյաւթյան ունի և մյուս

85) «Գյուղացու ձայն» — № 1. 19 ապրիլի 1920 թ. Յերևան. (Թրդան Հայութիստի աշխատավոր գյուղացիական Միությունների):

86) (Պետ. Արխիվ. Գործ 1619. էջ 635. Փոնդ 67.

ավերի եյին մատնում այս ու այն շըմանները։ Այսպէս, որինակ Մարտիրոսի խմբի 1920 թվի սեղանմըրերին եջմիածնի վրա կատարած հարձակումը տակն ու վրա յէ անում տեղական իշխանության որդանները և ահ ու սարսափի մեջ գցում Եջմիածնի հասարակության, թալանի մատնում նրա ունեցվածքը։

«Յերեկ Յերեվանից ներս խուժեց այստեղ Բաշդյառնեցի Մարտիրոսի խումբը—հեռազբում և եջմիածնի Զեմսուլ Վարչ նախարարակետին, իր վրա դրած պարտականությունները չհասկանալով ամենից առաջ զինաթափել և զավառակային իշխանությունը ծնծելով և հայոյելով նրանց Գավառի իշխանությունը այժմ վարկարեկվեց իր ժողովրդի առաջ չնորհիվ խմբագետ Մարտիրոսի այսպիսի վարմունքի։ Նման բոլոր գործողությունները վարկարեկում են կառավարությանը և ժողովրդի մեջ հակապետական ու անիշխանական տրամադրություններ են առաջացնում, հրաժարվել են գավառակային և քաղաքային միլիցա պետներն իրենց ողնականներով, համարելով իրենց վարկարեկված ժողովրդի առաջ։ Խնդրում ենք անմիջապես յետ կանչել Մարտիրոսին յուր խմբով, վորոնք արգեն անցնել են գավառ և վորոնք շարունակում են իրենց ապորինությունները, անմիջապես ուղարկել արտակարգ քննիչ և հանցավորության ինքարերին խիստ պատասխանատվության, հակառակ դեպքում վերցնելով ամբողջ պատասխանատվությունը մեր վրա (պետք ե կարդալ վրայից Վ. Պ.) կդադարեցնենք մեր գործունեյությունը, վորոնք հետեւ այդպիսի հանդամանքներում հնարակոր չի գավառ կառավարությունը՝ 37)։

Կաղարշապատի քուղաքային խորհրդի անդամ Պուրուզյանը դաշնակցական կառավարության ներքին գործոց նախարարին տված իր դիմումի մեջ հետեւյալն է գրում։

«Քյարնվեցի Մարտիրոսը իմ բացակայության ժամանակը կիսուղարկե իմ տունս և վախտուն հոգով մտնում և այդիս տակն ու վրա յե անում, անդամական և կողման, վերցնում Հրացանս № 201022 և տանում ին յերկու վկայականներու, տանելով նույնակա չինելու և ծառայիս պալտուն։ Մարտիրոսից պահանջեցի հրացանս և մյուս իրերը, հանդիպեցի բուռն հայհոյանքի և ապահաճարության, չստանալով վոչ մի բան տարած իրերից։ Յես բուռն կերպով բողոքում եմ պաշտպանելով իմ քաղաքացիական պատիվը մտրակներից ու յերբ մեկը փորձում և հաստառել իրականությունը ծեծի, հայոյանքի յենթարկվում զրպարտիչ ու առնիւյալ խոռքերով, կրկնում եմ, վոր բողոքելով այդպիսի վարմունքի դեմ, խնդրում եմ կարգադրեք վերադարձնել հրացանս ու տարած իրերը» 38)։

Պահանջված դեպքում մենք կարող ենք մեր պաշտպանած

37) Պետ. Արեգիլ Փ. 65 գործ № 116. էջ՝ 235-242.

38) Պետ. Կենտ. Արեգիլ Փանդ 67, գործ № 1815, էջ՝ 258.

վերոհիշյալ թեղն ապացուցել և հաստատել վոչ միայն միքանիք շրջանների, միքանի գյուղերի որինակով, այլև Հայաստանի բոռն ըրջանների ու բոլոր գյուղերի կոնկրետ որինակներով։ Բայց, հիշված միքանի փաստերն ել, իմ կարծիքով, քիչ չեն միանդամ ընդմիշտ հերքելու Խատիսյանի, Զամալյանի և Վրացյանի, նրանց կուսակցության պրովակացիոն հայտարարությունները և ապացուցված հայտարարելու անարիխայի, թալանի, ավաղակության ժողովը առաջարարելու մասսայական բնույթը, այս ամենի Դաշնակցության համար սովորական լինելը։

Դաշնակցական Հայաստանի անարիխայի, ներքին խժդութությունների հիմնական գործոններից մեկն ել դաշնակցության բանակն եր, ուղղուցար զորքերը, յեթե կարելի յե միայն այդպես անվանել։

Հայաստանի «Հանրապետության մեծագույն նախարարապետին» ներկայացրած մի գրության մեջ ներքին գործերի նախարարի տեղակալութը, այդպես ել խոստովանում ե՝

«Հայաստանի կատարված անկարգությունների, ապրինությունների ու բռնուրյունների մեծագույն մասը կատարվում է զինվորականների միջոցով։ Մինչև այժմ թե նահանգներից և թե Ն. Պ. նախարարների միջոցով։ Մինչև այժմ թե նահանգներից և թե Ն. Պ. նախարարների միջոցով վերահիշյալ արարքների մասին կազմված սրբարությունները ու յեղած բողոքներն ուղարկվում ելին առզմական ձանագրությունները ու յեղած բողոքներն ուղարկվում ելին առզմական ձանագրությունն, սակայն մինչև այսոր գեղք չի յեղել, վոր իմանանք թե հանցավորները պատճեցին, ուստի և այսուհետեւ նման նանք թե հանցավորները պատճեցին, վոր իմանք գործությունները ուղարկվում եմ Զեզ, վոր ծանոթանաք և տնօքերությունները ուղարկվում եմ Զեզ, վոր ծանոթանաք և տնօքերությունները» 39)։

Գյուղացիների դրությունը քննելիս, մենք արդեն կողմնական ծանոթացանք վիճանությունների կատարած կիորեն ծանոթացանք վիճանությունների, բռնության ու թանմանորինակ մի շարք անկարգությունների, բռնության ու թանմանորինակ մի շարք անկարգությունների, բռնության ու թանմանորինակ մի շարք անկարգությունների, կատարում իր պարտականությունները, Հայաստանում «կարտեր» կատարում իր պարտականությունները, Սարկայն, պատկերը լին ու կանոն» ստեղծելու ուղղությամբ։ Սարկայն, պատկերը լին յինի, յեթե դունե միքանի ընդհանուր գծերով, չծանոթանական յենք դաշնակցության զրքի մի չափազանց հետաքրքրական և բնորոշ կողմի՝ ԴԱՍԱ. ՔՈՒԹՅՈՒՆ հետ։ Իր իմպերիալիստական բնորոշ կողմի՝ գործի մի չափազանց հետաքրքրական կառավարկանությունները մեծ Հայաստանի ստեղծման ցնորմիտ քաղաքաց «ծովից-ծով» մեծ Հայաստանի ստեղծման ցնորմիտ գեղակալով, դաշնակցական կառավարկանությունները մեր կողմի առաջարկությունը մասնի կերպով գենքի տակ եք պահում ևսո 40.000-անու

39) Պետ. Կենտ. Արեգիլ Փ. 67 գործ № 1793. էջ՝ 41.

մի բանակ. 12-15 Հասակ, վորն անկասկած չեր կարող չանդրագանկալ յերկը տնտեսության դրության քայլքայման, գյուղի և քաղաքի աշխատավոր բնակչության նյութական-բարոյական վիճակի վատթարացման վրա։ Համարձակ կարող ենք պնդել, վոր աշխատանքի ընդունակ բոլոր մարդկի դաշնակցական կառավարության ըրջանում շարունակաբար, անկախ իրենց կամքից ու ցանկությունից, մասուդերի ու մտրակի ձնչման տակ, կտրված եյին աշխատանքից և պահպատ եյին զենքի տակ, դաշնակցականների ստեղծած բազմաթիվ հերքին և արտաքին ռազմական ճակատամասերում, քաղցած, մերկ ու վոտարորիկ վիճակում։

Գաղտնիք չե, վոր դաշնակցությունն իր զորքն սպառազինում
և կերակրում եր միաժամանակ դաշնակից իմպերիալիստական
